<<Մ Ա Ռ Ք>>
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

<<M A R Q U E>>
LIMITED
LIABILITI
COMPANY

0014, ք. Երևան, Պ. Սևակի փող., 1
☎ 091 438042
marq.htg@gmail.com
ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 17598
P. Sevaki 1, Yerevan, 0014,

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«Մ Ա Ռ Ք» ՍՊԸ տնօրեն
Գ. Հակոբյան
06.09.2024թ.

**ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՄԱՀ-ՄԱԾՁՔ-22/08-12/1**

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

**Պատվիրատու՝**
**Շիրակի մարզի**
**Անիի համայնքապետարան**

**Նախագծող՝**
**«Մ.Է.Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ » ՍՊԸ**
ՔՊԼ 18516
**Տնօրեն Գ. Գևորգյան**
**Նախահաշվարկող՝ Մ. Գասպարյան**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կատարման համար հիմք են հանդիսացել.

1. Նախագծման թույլտվություն N01/05 առ 07 փետրվարի 2022թ.:
2. «ԳԵՈՌԻՍԿ գիտահետազոտական ընկերություն» ՓԲԸ-ի կողմից տրված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ինժեներաերկրաբանական եզրակացություն 2022թ փետրվար:
3. Պատվիրատուի և Կատարողի միջև կնքված պայմանագիրը:
   Փորձաքննության է ներայացված ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխված տարբերակը, որի համար ըստ առաջադրանքի՝ պահանջվում է պարզ փորձաքննության անցկացում:
   Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացված են 1 գրքով՝
   - **Գիրք 1 –գծագրական մաս և նախահաշիվ**

**Գծագրական մաս**

Նախագծի կազմը ներկայացված է 2 մասով՝

- Աշխատանքային գծագրեր
- Ամփոփագրեր

Գծագրերը ներկայացված են 20 գծագրական թերթերով, որոնցում ամփոփված են՝

- Հատակագիծ
- Լայնական կտրվածքներ
- Եզրաքարերի տեղադրման սխեմաներ

«ՄԱՌ-Ք» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

- Իրավիճակային հատակագիծ
- Երկայնական կտրվածք
- Ծածկի կառուցումը փոխհատման և հարակցման մասերում
- Երթևեկության կազմակերպման սխեմա
- Ճանապարհային նշանների չափերի սխեմա
- Ճանապարհային նշանների տեղադրման սխեմա
- Բետոնե վաքերի կոնստրուկցիա
- Պայմանական նշաններ
- Ճանապարհային հագուստի կոնստրուկցիա

Ամփոփագրերը ներկայացված են 9 գծագրական թերթերով, որոնցում ամփոփված են՝

- Հողային պաստառի վերականգման ամփոփագիր
- Երթևեկելի մասի նորոգման ամփոփագիր
- Իջատեղերի ամփոփագիր
- Մայթերի քանդման և վերականգման ամփոփագիր
- Բետոնյա վաքերի ամփոփագիր
- Դիտահորերի ամփոփագիր
- Ճանապարհային նշանների ամփոփագիր
- Շրջադարձի անկյունների, ուղիղ մասերի և կորերի աղյուսակ
- Համահավաք ամփոփագիր
- Անհրաժեշտ լաբորատոր ստուգումների մասնագիր

Նախագծով նախատեսված է իրականացնել ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի ԿՄ0+000- Կմ0+461 հիմնանորոգման աշխատանքներ:

Իրականացվել է ճանապարհի գոյություն ունեցող ծածկի ուսումնասիրություն, որից պարզ է դարձել,որ ճանապարհահատվածը չունի ա/բ ծածկ:

Հիմնվելով ինժեներա-երկրաբանական ուսումնասիրության արդյունքի վրա կատարվել է ճանապարհային ծածկի հաշվարկ, որը վերանայվել է պատվիրատուի կողմից:

Հաշվի առնելով պատվիրատուի առաջադրանքը, ճանապարհային հագուստն ընդունված է՝

- Հատիկավոր ենթահիմք, ավազակոպիճ – 10սմ
- Խճավազային հիմք բիտումի տարածումով– 15սմ
- Մանրահատիկ ա/բետոն – 5սմ

Նախատեսված է նաև գոյություն ունեցող դիտահորերը բերել ընդհանուր նիշի:

Ճանապարհի ջրահեռացումը իրականացնել մակերեսային;

Ճանապարհահատվածում անվտանգ երթևեկություն ապահովելու համար նախատեսված է՝

ճանապարհի գծանշում ըստ ԳՕՍՏ – Ռ-51256- 99 պետական ստանդարտի

ճանապարհային նշանների տեղադրում համաձայն գործող ԳՕՍՏ – Ռ-52290- 2004 պետական ստանդարտի

Ներկայացված է նաև շինարարական աշխատանքների կազմակերպման, անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի պահպանման դրույթները ինչպես նաև շինարարության կազմակերպման օրացուցային գրաֆիկը:

«ՄԱՌ-Ք» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

**Նախահաշվային մաս**

Շինարարական աշխատանքների արժեքները հաշվված են ըստ շինարարական նորմերի արժեքի հաշվարկման կարգի, /հավելված թիվ 8, ՀՀ Կառավարության 2011թ. հունիսի 23-ի թիվ 879-Ն որոշում/:
Վերադիր ծախսերը հաշված են ուղղակի ծախսերի գումարից՝ 13,3%

Շահույթը հաշված է բոլոր ծախսերի գումարից՝ 11,0 %

Նյութերի արժեքները բազմապատկված են հետևյալ գործակիցներով՝

ա/ նախահաշվում չհաշվարկվող ոչ հիմնական նյութերի արժեք՝ գ=1,05

բ/ պահեստավորման և նյութերի նախապատրաստման ծախսեր՝ գ=1,02

գ/ տրանսպորտային ծախսեր նյութերի նկատմամբ՝ գ=1,088,

Ավելացված արժեքի հարկը հաշվարկված է բոլոր ծախսերի նկատմամբ՝ 20,0%

Աշխատավարձը հաշվարկված է 1984թ. նորմատիվային աշխատատարության հիման վրա, ընդունվելով շինարարությունում զբաղված բանվորների միջին (ամսեկան) աշխատավարձը–266 060 /դրամ/, կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը՝ 2457,83:

Մեքենաների շահագործման ծախսերի հաշվարկը կատարված է 1984թ. նորմատիվային ծախսերի հիման վրա՝ կիրառելով համապատասխան հաշվարկվող ինդեքսը՝ 3107.16:

Նյութերի արժեքների հաշվարկը կատարված է 1984թ. նորմատիվային ծախսի և 2024թ. թիվ-9 ինֆ. տեղեկագրի հիման վրա, մշակված ՀՀ էկոնոմիկայի նախարարության "Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն" ՊՈԱԿ-ի կողմից և շուկայի:

Ըստ փորձաքննության եզրակացության նախահաշվի կազմումը ամբողջովին համապատասխանում է ՀՀ Օրենսդրության սահմանված կարգին:

Ըստ հավաք նախահաշվի լիմիտավորված տոկոսադրույքների՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախահաշվային փոփոխված տարբերակի արժեքը կազմում է 219 119 160 (երկու հարյուր տասնինը միլիոն մեկ հարյուր տասնինը հազար մեկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 36 519 860 (երեսունվեց միլիոն հինգ հարյուր տասնինը հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

Ըստ սույն փորձաքննության՝ նախահաշվային արժեքը՝ 219 119 160 (երկու հարյուր տասնինը միլիոն մեկ հարյուր տասնինը հազար մեկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ ընդհանուր գումարով, երաշխավորվում է հաստատման:

Շինարարության ընթացքում, կախված նյութերի արժեքների և աշխատավարձի փոփոխությունից, առաջարկվում է կատարել նախահաշվի վերահաշվարկ:

**Եզրակացություն՝**

Ուսումնասիրելով ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ «ՄԱՌ-Ք» ՍՊԸ-ի փորձաքննությունը երաշխավորում է՝ ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի կենտրոն ճանապարհի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերիփոփոխված տարբերակի համապատասխանությունը ՀՀ Օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

**Փորձագետներ** Լ. Ջզմեջյան

Տ. Հակոբյան

«ՄԱՌ-Ք» ՍՊԸ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ